



ԴՅԱԳ. 1864 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ · — ԱՊՐԻԼ

## ՆԵԱՐՔՈՍ ԵՒ ՊՈԼԿՐՏՈՍ

22 ԱՊ ՌԻԼԻ

**Ապրիլ** ամսոյ 22. դարնան և ամառուան միջասահման ժամանակ. գեղեցիկ օր. գեղեցիկ և զրօսանք մտաց ու մարմնոյ ՚ի գեղեցկութեան վայրի, այսինքն ՚ի բնութեան. ՚ի մէջ նորաբողոք և բարդաւաճ ծաղկանց և տընկոց, պայծառ ջրոց հեղասահ կամ կարկածուն գնացից քով, դալարածայր ծառոց անուշահոտ ոստոց հովանեաց տակ, հաշտ և անկասկած երկնակամարին ներքեւ: Այսպիսի ատեն այսպիսի տեղ՝ քաղցր է թողուլ երբեմն ընտանի հոգեր և առանձին մտածութիւններ, (բարձրերն անգամ), և առանց նուաստանալու ՚ի մարդկութենէ՝ խոնարհիլ ընութեան ուրիշ անմեղ որդուոց հետ, մարդասէր կենդանեաց հետ՝ խառնուիլ, խաղալ ընդ գառին և ընդ ուլու, անոնց և մեղ համար հաւասար ափուած մարմանզից վրայ. յիշել և կարդալ հին

մարդկան հովուական երանախառն ըսուած կեանքը, գոնէ ըստ նկարագրութեան քերդողաց: . . . Բայց ուր են մեր հովուերգակըն. ուր Հայ Թէոկրիտք և Մառոնք, որ հոչակէին հայրենի եղեմաբուղիս գետոց հովիտները՝ ոչ պակաս, այլ և աւելի գեղեցիկ և երջանիկ եղած քան զԱրկաղիա: Արկաղիա. Յոյն և Լատին քերդողաց երազեալ եղեմն, ուր ընդ ամենայն գեղեցկութեանց բնութեան՝ ընդ հովտաց, ջրոց և բուտոց՝ խառնէր և երգոց ներդաշնակութիւնն այլ, իբրև իր բնիկ երկրէն բղխելով. ուր հովուաց հեղինակն և պաշտպան՝ պայիկն Պան՝ հնարեց Սրինգը, և շրջակայ գեղեցիկ տեղեաց և անոնց միջի գեղեցկաց անուանկըն՝ քաղցրալուր հոչակեցան. երբ կաթնասուն շրթունք՝ ՚ի շար եղեղանցն վախսացին, տեղւոյն բրտարարոց բնակչաց վրայ անանկ եւ

բանգերանգ քօղ մը իջաւ , որ բուն մարդավայել և երանագոյն երկիր՝ այն տեղն կարծուեցաւ . և վայրենի ու անկիրթ սեպուեցան սիրտ և ականջ որ չհաւանին անոնց կեղծեացն անգամ , կամ չախորժին այսպէս գարնանահոտ օրեր՝ պարապիլ անոնց հռչակողաց հռչակեալ գրուածոց հետ . և նոյն ինքն հռոշակող բանաստեղծքն՝ թէ և օտարք և

հեռիք աշխարհաւ , այլ գրեթէ կու հարկաւորէին իրենց գովանի հովիւները և երգողները Արկադացի ընել . և թէ և ոչ պակաս քան զԱրկագիոյ՝ այլ գուցէ և աւելի գեղեցիկ իտալիոյ մասին վրայ , Մինչիոյ գետոյն հովտաց մէջ կ'երգէր և երգել կու տայր Մառոն (Վիրգիլիոս) իր թիրսիսը և կորիփոնը , բայց դեռ Արկագացի կ'անուանէ զանոնկը .

**Երկաքանչիւր իսկ ծաղկատիք , Երկաքանչիւր Արկագացիք  
եւ յերգել հանդիտազօրք , եւ յանդրագարձըն դիմազրաւք :**

**Ambo florentes aetatibus, Arcades ambo,  
Et cantare pares et respondere parati.**

**Չըլան մեզի այլ անախորժ , ով չայկակ , ոչ անուն ոչ բնութիւն և ոչ երգիչը Արկագիոյ . մանաւանդ օտարաց մէջ մեզի այնչափ քաղցր ըլլայ , որչափ անոր շինական և բնական վայրաց մէջ կու լսենք ոչ սակաւ մեր հայրենի տեղեաց նմանաձայն անուններ , ինչպէս Փուլակ , Պետրոսակ , Պարոյր , Երիզան (Արածանի) գետ , Մելաս գետ , և այլն : Այս յետին գետոյս՝ Երիմանդեանն Մելասայ անունն՝ օրուանս յիշատակաց հետ խառնուելով , յափշտակէ զիս յԱրկագիոյ՝ անոր հովուաց և երգոց հետ , և փոխազրէ մեր Գ չայոց մելիտինեան Մելասայ գետահովիտը , որ 'ի շրջակայ լերանց կապագովվիոյ և կոմագենաց իջնէ , ձեւանայ , և երթայ թափիլ յեղեմականն Եփրատ . և սա մեծ զնդնչմամբ քարալեռներ կտրելով՝ հոս զատէ մէկմէկէ զՄեծ և զՓոքր չայս , ասոր նահանդ թողլով զՄելիտինէ . զայն՝ զոր յառաջ քան զ'4000 տարի՝ քաջ բազուկն Արամայ իրրե կամրջաւ իր բնիկ աշխարհին հետ միացուց և հայացուց : Հոս , այս մելիտինեան Մելասայ հայրե-**

**նի հովտաց և առուաց եղերքը՝ հրաւիրեմ զքեզ այսօր , Հայկակ . Եկ , այս գեղեցիկ ժամերուս և հովերուս՝ հանգչինք ընդ հովանեաւ հացեաց և հաճարեաց , ընդ Դարնիտեայ և Մելիբեայ , լսել և յիշել երջանիկ ժամանակաց , և երջանկագոյն անձանց մրցանկը՝ մեծ սիրով քան երգով : ...**

**Ո'վ , քանի վեհ ու վսեմ է քու հոսանքդ՝ ով Եփրատէս , որ մարդկութեան նախածնողին հետ՝ և անկէ այլ առաջ յիշուած՝ կ'իջնէ իրրե ընդ աստիճանս բազմագարեան ժամանակի երթալ յանդունդ յաւիտենականութեան . քանի քաղցր կրկջալով խառնուի քու ծոցիդ այս մեղրածորան Մելասա այլ , որ թէ և անձանօթ և անայցելու 'ի վայրենասէր մուսայից , այլ ինծի հաճոյագոյն և սրբագոյն է քան զամենայն վտակս և հովիտս , հովիւս և երգիչս Արկագիոյ . քանզի ունի և մերն Մելաս , այո , և գերագոյն ևս ունի՝ իր երգով սիրով մըրցողները , իր եռանդուն և զուգահասակ պատանիքը , իր աննման ջուխտակը , որք և**

**Երկոքեան իսկ ծաղկատիք . Երկոքեան Մելիտացիք .**

**Հաւասարք յերգ , յերգ սուրբ սիրոյ , եւ 'ի մրցանս կազմապատրաստք :**

**Արդ բարով Երթան ով Մելիբէէ<sup>1</sup> քու**

<sup>1</sup> Զայս անուն կ'առնու Ալբակեսս իր է հովուերգութեան մէջ , յորում երգով վիճել կուտայ թիրսիս և Կորիթոն հովուաց , և ետքին յաղթող սէպէ :

**ստեղծած և քու հռչակած արկադացիք , և թիրսիսն և Ալեքսն , իրենց ամենայն երգերով և երգոց առիթներովն . և գան մեզի , ու միշտ մնան ճըշմարիտ շնորհաց ծնունդք՝ հոգւով եր-**

կուռեակքն՝ մելիտացիք մեր աղնիք՝ ՊՈԼԻՔՑՈՍ և ՆՀԱՄՔՑՈՍ՝ որք ոչ հովիկ արուեստիւ և եղեգով երգաշարժք, այլ հոգով հետևողք այն մեծի հովուին՝ որ հովուէ միշտ՝ ի վայրի դալարով և սնուցանէ առ ջուրս հանգստեան. մարմնով զրահաւորք և զինաշարժք՝ կայտառ կտրիճք. երկուքն այլ զինուորեալք հրովարմէական բանակին ժի գնդին մէջ, որ երբեմն (յամի 174) ընդ Մ. Աւեղիոսի կայսեր երթալով՝ ի պատերազմ ընդդէմ բարբարոսաց՝ յերկիր անջուր և անապատ, 'ի տարակուսել և 'ի վրտանգել բանակին և պարապ տեղ կանչել անմուռնչ և անականջ չաստուածներու, ընծայեց իրմէ գունդ մը քաջաց քրիստոնէից, որք սրտերնին և աչուրնին յերկինք վերցընելով՝ առ Աստուած աղաղակեցին, և մէկէն թնդալով որոտացին անամպ անմիտը երկինք, կայծակներ թափեցան, անձրեաց հեղեղք իջան, և մարմրած բանակն խմեց կենդանացաւ. անկէ ետև բարեացապարտ զօրագունդն այն՝ անմահացաւ Շանքանար լէգէուն՝ <sup>1</sup> կոչմամբն յերկրի, իսկ յերկինս՝ վկայութեամբ սուրբ հաւատոցն: Այս դիպուածէս իրքե դար մը ետև՝ սոյն գունդս պահապան կունստէր եփրատական կողմանց՝ ի ՄԵՂՄԻՆԷ քաղաք, զոր կայսերքն չոռվմայ ամրացընել տուեր և զօրանիստ ահմաննակալ քաղաք պատրաստեր էին. և ահա հոս այս գնդիս մէջ զինուորեալ և յառաջացեալ էին մեր հոգեզոյդ խեղենիքն՝ Պոլիկտոս և Նէազոս, բնիկ իսկ տեղացիք:

Բ. ՄԵՂՄԻՆԷ վաղուց հայացեալ՝ յառաջադէմ այլ եղած էր՝ ի հայութեան, աղնիւ և մեծ նախարարութիւն մ'ընծայելով ազգերնուս և տէրութեան, որ յիշուի նաև՝ ի գահնամակին խոսրովու (հօր Ս. Տրդատայ), որոյ թագաւորութեան ժամանակ ծաղկէին մեր նահատակքն, և որոյ եղերական մահուան

<sup>1</sup> Legio Fulminata կամ Fulminatrix ըստ Լատինաց: Ըստ ոմանց այս անուամբ լեզուն յիշուի Տիառոսի կայսերութեան առենէն՝ ի վերջ բդարու:

տարին (260) կատարեցաւ մերոնց երանական հանդէմն այլ: Այս նախարարութեան պայազատն էր թերես Պոլիկտոս, զոր ամենքն վկայեն աղնուատոհմ ըլլալ, (Seigneur Armentéien ըստ Գոռնէլի): ապա թէ ոչ՝ անհաւատալի երեխ որ ֆելիքս՝ հոռմէական կայսերաց կուսական՝ զիջանէր անոր կնութեան տալու իր գուստորը՝ Պաւլինէ կամ Բառլինա: ուրեմն թէ քաղաքական և թէ զինուորական պատուով՝ առաջին աղնիւ երիտասարդն էր ՄԵՂՄԻՆԵԱՅ մերս Պոլիկտոս: որոյ անունն՝ եթէ կամօք աներոյն չէ հոռմացեալ՝ հարսին անուան մերձեցընելով, կրնամիք յունացեալ կարծել, ինչպէս Ա. Եւստուատիոսեանց և ուրիշ հայազգի սրբոց ոմանց անուանքն այլ: բայց անհաւան այլ չէ որ նոյն իսկ աղնուական չայք խնամութեամբ թունաց և անոնց դպրութեամբ վարելով այն ատեն՝ յունական անուններ այլ կու դնէին իրենց որդուց: ինչպէս ըսեր եմ քեզի, Հայկակ, Սալհունեաց սուրբ երիտասարդին յիշատակին, որ Աթենոգոր կոչուէր, և մայրն այլ Աղութիթա<sup>1</sup>: Արդ ինչպէս այլ ըլլայ՝ մեր ՄԵՂՄԻՆԵԱՆ երիտասարդին անունն՝ որ յունարէն Բոլիեւքդոս (Πολύευκτος) զրի և Բազմադոքք կամ Բազմանուէր թարգմանի, 'ի Լատինաց կերպ կերպ կոչի (Polieuctus, Polioctus, Polictus) և մանաւանդ՝ ի Հայոց, Պողիեւքտոս, Պողիոքտիոս, Պողոքտիոս, Պողոքտիոս, Պողիքտոս: որոցմէ առաջինն հաւատարմագոյն է յունական ձայնին, վերջինն մեզի աւելի ընտանի և դիւրալուր: — Զինուորութեան մէջ ինչուան որ աստիճան բարձրացեր էր Պոլիկտոս, չէ նշանուած: բայց միայն զի աստիճանաւոր էր, և քդամիդ ունէր. և անտարակոյս է՝ որ իր հասակն, քաջութիւնն, արիւնն, փեսայութիւնն ֆելիքսի՝ իրեն ցուցընէին և մօտեցնէին շատ բարձրագոյն աստիճաններ և ընդարձակ սահման երկրաւոր փառաց և պատուոյ: որոց արժա-

նաւոր էր՝ այն ձիբքերէն աւելի՝ իր բարուց լաւութեամբն . զի էր ներգուստ և արտաքուստ կայտառ և աշխոյժ , եռանդուն և զուարիթ խառնուածքով , լայն և բաց սրտով և ձեռքով . միայն՝ պատերազմի բանակաց մէջ ահաւոր և շանթահար . իսկ անկէ դուրս՝ նաև արիական սպառազինութիւնն՝ իր հասակին և երեսաց նոր փայլք մը տալով՝ կ'երևցնէր զինքն ըղձալի և սիրահար . կարծես թէ գեղեցիկ լաւութիւններն վառ 'ի վառ դրօշներու պէս հոռմէական և հայրենի նիզակաց վրայ պլլելով՝ պիտի կարենար ամեն դժուարութիւն մերժել , ամեն յաջողութեան դուռ բանալ , և ըլլալ երկրիս երջանիկ վայելող և տէր մը : Գուցէ երբեմն ինքն այլ այսպիսի իողձերով և կենակցին սիրովն՝ կուլուզայր ծանուցեալ երանութեանց և յուսոց մէջ . բայց իր գեղեցիկ և մեծ սրտին համար՝ անոր ստեղծողն անծանօթ և գերերկրեայ բարիք պատրաստեր էր :

իսկ Նէարքոս<sup>1</sup> , որոյ սեփական յիշատակն է այս օր (22 ապրիլի) , հասակաւ , պատուով և սրտիւ մերձաւոր զուգակից Պօլիքտոսի , ունէր արտաքին փոքր զանազանութեանց մէջ ներքին մեծ տարբերութիւն մ'այլ . զինուորութեամբ զնդակից և աստիճանաւ այլ յառաջացեալ՝ անոր նման , ցեղիւն այլ ազնուական և մեծատուն . և հաւանօրէն 'ի նոյն գ' Հայոց սահմանէն , բայց ոչ 'ի բուն Մելիտինեայ , այլ 'ի կանան<sup>2</sup> , կամ ըատ յունացեալ կոչման՝ կանանեւուն քաղաքէ , այսինքն կանանացւոց քաղքէն , որոյ գիբքն մինչեւ հիմայ անծանօթ է մնացեր , բայց միշտ կարծուած է մերձաւոր Մելիտինէի : Սակայն ոչ այնքան տեղեաւ , հասակաւ և բաղդիւն որբան սրտով մերձաւորք և համազոյգք էին « Նէարքոս . . . և Պօղիոքտոս՝ երա » նելի սուրբ վկայն՝ եղրարք կոչէին , » ոչ եթէ ազգականութեամբ , այլ ըստ

» բարիոք յօժարութեանն և սրբոյ հան « դիպէին . և զրնտանի սերտ սերն զոր » ունէին՝ կոչեցան բարեկամք և ըն « կերք , ըստ Աստուծոյ խորհրդեան գը » տան խորհրդակիցք երկոքեան » : Այն սերտ սերն այնքան մերձաւորեր , միացուցեր ձուլեր էր զանոնք , որ ոչ երկիր և ոչ երկինք կրցան իրարմէ զատելու : Սուլք , մեծ և աստուածային էր ուրեմն Նէարքոսի և Պօլիքտոսի սէրն . որոց քով կ'աղօտանան , միմնանան , չքանան սիրելութիւնք դիւցազանցն Աքիլլեայ և Պատրոկլեայ , զօրավարացն՝ Աղեքսանդրի և Հեփիեստինի , Պիւթագորեայցն՝ Պիւթիսայ և Դամոնի , և Դիոսկուրեայց՝ Կաստովրի և Պոլիկրտեայ , և այլոց նմանեաց , եթէ քննուին անոնց կիրքն , դործքն և կատարածն : Թերեւս երկրիս վրայ գրուած կամ կրուած ճշմարիտ և հզօր բարեկամութեան սիրոյ՝ չկան գերագոյն օրինակք քան զմեր Մելիտացի նահատակս . որոց համար ամենասուոյգ է վկայեալն , թէ « իին յերկուսին մարմինս՝ մի ողի և մի կետնք » . այս , ամենասուոյգ , զի ինքն իսկ կրողաց մէկն է և զրողն զայս , նազելին Նէարքոս : — ի բարեբաղդութիւն հասարակաց և 'ի պարծանս Հայաստանեայց՝ սոյն ինքն սուրբս՝ այս բաներս և իր սրտակցին նահատակութիւնը գրով աւանդեր է , որպէս շատք 'ի սրբազրաց վկայեն , այլ չեն տեսեր գրուածը . զոր կարծեմ ամբողջագոյն քան զնոսա՝ ոչ շատ տարի առաջ գտանք մենք մեր ազգային դրաբութեան աւանդեր գանձուց մէջ , յօտար և յանծանօթ տեղ : Այս գրուածս , թէ և մէջն ուրիշ ձեռք այլ մնած և 1600 տարուան հնութիւնն քիչ մ'այլայլած ըլլայ , գեռ ոչ միայն իբրև հնագոյն գըրուած քան զչարց թունաց և Հայոց պատուասիրելի է , այլ և պաշտելի՝ իբրև կենդանի թարգման սրտին Նէարքոսի :

Սիրտ Նէարքոսի , հեղուկ և նազուկ . որոյ սրբազան սպիտակութեան վրայ յանդզնիմ՝ նշմարել լուսաթափանց տրտմութեան շուք մը . բայց այնքան բարակ և թեթե շուք՝ որ կրնայ վկայու-

<sup>1</sup> Նէարքոս կամ Նէարիսն ըատ ոմանց կրնայ թարգմանուիլ նաւապէտ կամ նոր նշան :

<sup>2</sup> Կանան անուամբ գեղ մը յիշուի կիւլիկից մայրաքաղաք Տարտանի քով , յառաջ քան զժամանակ այս պատմութեանս :

թիւն մ'ըլլալ առաջին դարուց կուսա-  
մանուկ քրիստոնէի մը սրտին . այնպէս  
անոյշ մելամաղձ կամ մեղրամաղձ մը՝  
ինչպէս կրնար վայելել երկրաւոր սր-  
բոյ մը : Նէարքոս քրիստոնեայ էր և  
արժանի Քրիստոսի անուան և սիրոյն .  
մեծատուն , ծաղկահասակ և զինաւոր .  
բայց այս ձիրքերս փոխանակ զինքն  
յերկիր ձգելու՝ աւելի վսեմութեամբ մը  
յերկինք վերցրնել տային : Ո՞հ , որքան  
տարրեր Նէարքոսեանքն ժամանակիս  
հասակակից երիտասարդներէն ոմանց ,  
որք կ'ուզեն աւելի ստուգել իրենց հա-  
սակին քան հաւատքին բնութիւնը . ան-  
վայելք մէկուն բնատուր բարեաց , մէ-  
կային երկնաւոր փառաց . արդարեւ մե-  
ծամիտք անիմաստք , որք չեն կրնար  
հասկընալ թէ բնութեան ուժոյն և չնոր-  
հաց վրայ՝ այնպիսի ոյժ և չնորհք կ'ա-  
ւելցրնեն կրօնք , զոր ուրիշ հնարքով մը  
անկարելի է դունել : Ոյժ մարմնոյ , շր-  
նորհք հասակի և սրբութիւն սրտի , մը-  
տաց բացութիւն և հոգւոյ հաւատք ,  
ինչ զեղեցիկ ինչ վսեմ , ինչ ցանկալի  
խառնուրդ : — Այսպիսի էր մեր հաւա-  
տոց նախահարց , առաջին դարուց ծաղ-  
կահասակ քրիստոնէից . այնպիսի սպի-  
տակ սրտեր կային անոնց երագարիւն  
եռանդնոտ ծոցերը , որ 'ի հարկի և հա-  
լածանաց ժամանակի՝ երբեմն քահա-  
նայք աստուածային պատարագը մա-  
տուցանելու համար՝ յարմարագոյն և  
պատրաստագոյն խորան չէին դուներ՝  
քան զանոնց պարկեշտ լանջը , և այն  
տիրատաշ ջերմիկ և կենդանի սեղանոց  
վրայ կու դնէին և կատարէին անմահու-  
թեան խորհուրդը : Ո՞ր կրօնք կըրցեր  
է այսպիսի բան մը մտածել , այսպիսի  
երիտասարդներ ընծայել . յորոց մի էր  
և մեր նախանձելին Նէարքոս : Թերեւս  
Մելասայ կամ կանանայ լեռնապարիսպ  
հովիտքն՝ իր երկրաւոր հորիզոնը քիչ  
մ'ամփոփած էին , և շատ աշխարհային  
ծանօթութիւններ չունէր . սակայն հա-  
լածանաց ժամանակն , երկու կրօնից  
( քրիստոնէութեան և հեթանոսու-  
թեան ) անհաշտ կոիւն , աշխարհակալ  
չուվմէացւոց հետ զինակցութիւնն այլ՝

'ի հարկէ բաւական տեղեկութիւն տր-  
ւած էին իրեն . և ոչ տգիտութեամբ՝  
այլ ընտրութեամբ կու սիրէր ամփոփ  
մնալ . իր սրտին ու մտաց ընդարձակու-  
թիւն և բարձրութիւնը կ'առնուր ան-  
յագ ընթերցմամբ զրբի մը , որոյ ա-  
նունն և խօպն Աւետարան է , գործն՝  
սրբութիւն , վայելքն՝ անմահութիւն :

Այսպիսի գրքով և ձիրքով Նէարքոս  
առաւելութիւն մը կու ստանայր Պօլիք-  
տոսի քով , որ արտաքին ձրիւքն առա-  
մելեալ կ'երեւէր քան զՆէարքոս . և ըստ  
այսմ մասին՝ ետքինս պայծառ և հան-  
դարտ արշալուսոյ և տունջեան մը նմա-  
նէր , նա լուսնկայ գիշերոյ մը , որ ամե-  
նայն փայլմամբն այլ չիկրնար հաւասա-  
րիլ ցորեկուան , սակայն կ'իմացընէ որ  
իրմէ այլ ուրիշ բան չիկրնար ծագիլ՝  
բայց պայծառ տիւ մը : Ճես , Հայկակ ,  
ինչ փափկութեամբ և պարկեշտու-  
թեամբ կ'ըսէ զայս՝ ինքնին պատմիչն  
և պատմեալն մեր . « Եւ Նէարքոս քրիս-  
» տոնեայ էր . իսկ երանելին Պաւղիով-  
» տոս՝ հեթանոս բարուք զինքն անուա-  
» նէր , շոկ զանուն միայն . այլ 'ի ճըշ-  
» մարիտ հաւատոց ոչ փոխեալ լինէր .  
» և զբազում յերկմիտ քրիստոնէիցն՝  
» յաղազա ճշմարիտ հաւատոցն՝ 'ի բաց  
» որոշել փութայր » : Ըսել է որ Պօլիք-  
տոս արդէն համոզմամբ քրիստոնեայ  
էր և քրիստոնէից ջատագով , բայց գեռ  
անկնունք , գեռ հեթանոսի փեսայ և  
կենակից , գեռ աշխարհային կապերով  
կապուած , վտանգներով պաշարուած  
փորձանաց և հրապուրանաց մէջ . գեռ  
չէր սիրոը բոլորովին երկնքի տուած .  
այլ տուած էր Նէարքոսի . և Նէարքոսի  
տալն՝ առհաւատչեայ էր տալու Քրիս-  
տոսի :

Բայց Երբ պիտի ծագէր այն երջա-  
նիկ օրն . արդեօք այսօր վաղն ըսելով  
մէկ մ'այլ իր յուսացեալ վաղը պիտի  
չունենա՞ր . կամ ժամանակն երկըննա-  
լով՝ Պօլիքտոսի պատուոյ և փառաց մէջ  
յառաջագիմութիւնն և զբազանքն ար-  
գելք պիտի չըլլային երկնաւոր որդե-  
գրութեանը . և նոյն իսկ բարեկամին ու-  
շանալն՝ իրեն ( Նէարքոսի ) այլ արդելք

չէր իր երկրորդ մկրտութեանն (արեամբ)։ Այսպիսի մոտածութիւնք էին Նէարքոսի պայծառ պատկերին վրայ այն բարակ շուրջը բերողքն, որով աւելի այլ կ'աճէր իրենց սէրն . թէ և դրսէն ջանայր նա ամենեին նշան չտալ սրտին ժածուկ տագնապին . զոր և շատ անգամ փարատէր Պօլիքտոսի զուարթութիւնն և ախորթելով լսելն բարեկամին աւետարանութեանը . և թերևս ոչ այնքան աշխարհի և զինուորութեան հոգն՝ որքան նախնի քրիստոնէից ոմանց սովորութիւնն ուշացընէր զսա՝ ի մկրտութենէ, սպասելով երեսնամեայ տարիքին կամ կենաց հանդարտագոյն և վերջին հասակին : Նէարքոսի կասկածն աւելի իր բարեկամին աներոջ կողմանէն էր, որ հաւատարիմ իր տերանց՝ կայսերաց՝ կուամոլ մարդ էր . կոյր նախանձ և հաւատք մը կրնար Պօլիքտոսի գայթակութիւն ըլլալ, աւելի քան զսէր հարսին՝ Պաւլինեայ, և ֆելիքս յուսայր որ թոռներն մէկ մէկ նոր գամ կամ կապ ըլլային փեսային սիրար իր և իր դստեր, իր ազգին, տէրութեան և կրօնից հետ անքակ պահելու : Սակայն Նէարքոսի և քրիստոսի սէրն աւելի տեղ գտան այն սրտին մէջ . և աւելի քան զՊաւլինէ՝ սիրէր Պօլիքտոս վնէարքոս, և սիրուէր . և երկուքն այլ կրնային իրարու ըսել (Դաւթայ պէս վասն Յովանաթանու) . « Գեղեցկացար » ինձ յոյժ . զարմանալի եղև սէր քո « ինձ՝ քան զսէր կանանց ». անոնց պէս ասոնց ոգին այլ կապուած էր բարեկամին ոգւոյն հետ, և իւրաքանչիւր սիրեաց զընկերն ըստ անձին իշրում . և կարծեմ մեր Մելիտեան սիրելեաց արդիւնքն և կատարածն առաւել սիրալի և սրտառուչ եղաւ քան զայլոցն :

Գ. Ո՞ր սրտի գլխաւոր լուցկին չէ սէր . քայց կան սրտեր՝ որ միայն սիրելու և սիրուելու համար եղած կարծուին . սիրտք՝ որ սիրով կու սնանին և սիրով այլ հալին . սիրով ապրելու և սիրով մեռնելու համար եղած են : Սէր, կ'ըսեմ, չայկակ, և չեմ հասկընար ոչ թանձը զգացական և ոչ թատերական

կլքերը . այլ սուրբ և նուրբ սէր, որպիսի էր Նէարքոսին . սէր մը՝ որ իր ամանէն (սրտէն) աւելի և զօրաւոր ըլլալով՝ շուտով զայն պիտի սպառէր և վերանայր՝ ի բնագաւառն սիրոյ, յերկինս . և եթէ դեռ կ'ապրէր Նէարքոս՝ բարեկամին սիրով և սիրոյն համար էր այն : Քանի տարի այն մէկ կեանքն և ոգին երկու մարմնոց մէջ բնակեցաւ . և ինչ ըրին, ուր գնացին եկան սիրելիքն . — աւելորդ և պղտի բաներ են ասոնք՝ անոնց բարեկամութեան քով : Պօլիքտոսի շատ հեղ յանձնեց աներն զինուորական գործեր, զոր նա խոհեմութեամբ և արութեամբ՝ ի զլուխ հանեց . հաւանօրէն գործակից և մերձակից ունելով զիւրն Նէարքոս : Խոկ սա՝ որ կնոջ և ուրիշ կենակցի հոգէ ազատ էր, միայն զկատուած և զՊօլիքտոս մտածէր : Իւրենց կենաց դեղեցկագոյն մասն (ուսկից զատ մասն այլ չունեցան), այսպէս սիրով և խաղաղութեամբ անցաւ . զըրսէն այլ խաղաղութիւն էր՝ ի կողմանէ տիեզերակալ կայսերաց Հռովմայ . ինչուան որ՝ ի կէս Գ գարուն՝ Դեկոս կայսր հալածանքի հրաման հանեց ընդդէմ քրիստոնէից . ինքն շուտով կորաւ, բայց հրամանն քիչ շատ կու պահուէր իր պէս սակաւ ժամանակեայ իշխող յաջորդաց ատեն, մինչև յետ քանի մը տարւոյ վաղերիանոս կայսր նորէն սաստկացուց հրամանը . պատուիրելով դատաւորաց՝ որ ամեն ծանօթ քրիստոնեայ որ չառնու յանձն կոոց զոհելու՝ անոնց զոհ ըլլալ : — Այս հալածանաց ատեն կատարուեցաւ մեր Մելիտեան սիրելեաց նահատակութիւնն . զոր պատմիչք անորոշաբար զնեն այդ երկու կայսերաց ատեն, և քննաբանք տարակուսին տարւոյն վրայ . Խոկ ինձ երեսի թէ Դեկոսի ատեն սկսաւ Նէարքոս աւետարանել Պօլիքտոսի՝ զհաւատս Յիսուսի, մինչև վաղերիոսի և մեր Խոարով թագաւորին հալածանքն ելաւ . և անոնց երկուքին սպանուած տարին (260, 'ի Պարսից թշնամութենէ) նահատա-

կուած կ'ըսեմ զմեր Քրիստոսի նահաւակըն<sup>1</sup>:

Հալածանք . ինչ անիրաւ և անտանելի փորձանք բնութեան և սրտի . ճշմարտին հաւտալ , ճշմարիտը խօսիլ , անյանց անմեղ ըլլալ , մանաւանդ թէ ուրիներու բարիք այլ ընել , և ասոնց համար՝ իրրե ամենաչար դատապարտիլ , տանջուիլ , սպանուիլ : ... Յիրաւի բնութիւնէ վեր արիութիւն և համրերութիւն պէսզ էր հալածուելու , և ամենազօրաւոր երկնային յոյս մը . այս երկուքն այլ աւանդեց Փրկիչն մարդկան , ճշմարիտ երանութեանց ամենէն վերջ դասելով , « Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան , զի նոցա է արդայութիւն երկնից » : Ո՞հ , որքան խոր և քաղցր էր այս վճիռս հոգելուր ակընչաց , որ մէկէն հալածանաց սայրասուր փշերը կակուղ վարդից թերթից պէս սփուեց 'ի ներքե ոտից՝ ոչ միայն երկաթկօշիկ զօրականաց , այլ և փափկամորթ կուսանաց անգամ . որք իրրե ընդ ծաղիկս վազելով անցան ընդ հուր և ընդ սուր . և իրրե բազանեաց ջրով՝ լուացան իրենց ջերմաներմ արեամբն , ուրախութեամբ և խնդութեամբ կրելով ամեն հարուած , ցաւ , ու մահ . վասն զի անոնցմէ զօրաւոր է

<sup>1</sup> Յոյնք և Հայք յ'ինն յունուարի տօնեն զԱ . Պօլիքտոս , և յիշատակագիրն հաւտաւարիմ՝ ինքն իսկ Նէարքոս՝ ասէ զօրն այն յառաջ քան զորս ընդիքափոնին Արաց ամսոյ , կամ յառաջ քան զորս աւուրս արաց ամսոյ , որպէս թարգմաներ են նախնեք մեր , զարաց ամիս զուգելով ընդ յունուարի , որ յիշուե 'ի յոյն բնագրին . և անոր իդոսից չորսէն առաջն՝ է իր իններորդ օրն՝ Դարձեալ Նէարքոս վկայէ թէ « Ի գալստեանն և 'ի » Յայտնութեանն (Քրիստոսի) յետ չորից աւուրց և երանելին Պօլիքտոս վկայեաց » . և գարձեալ թէ « Թաղեցաւ սուրբն յաւուր չորեքշաբթօն » . որ ցուցանէ թէ այն ատեն այլ հոն տօնէին զգալուստ (ծնունդ և յայտնութիւն) Տեառն 'ի և յունուարի , և տօնին չորրորդ օրն է ինն յունուարի . և զի այն տարին այս օրս չորեքշաբթի էր , միայն այն հալածանաց ատեն մէկ տարի մը կայ որ Յայտնութիւնն կիրակի հանդիպի և անոր չորրորդ օրն՝ ինն յունուարի 'ի չորեքշաբթի , և է այն Քրիստոսի 260 տարին , յորում Պօլիքտոս նահաւակեցաւ , հաւանօրէն և իր զուգակիցն Նէարքոս , և յորում սպանան Վաղերիանոս և մերն խոսրով՝ հալածից :

ճշմարտութեան հաւատփն և սէրն : Այսու մտօք գեղեցիկ զարմանօք խորհրդածութիւն մը կ'ընէ ինքն մերն Նէարքոս . « Ճես , կ'ըսէ , զպանչելի մատակարարութիւնն Աստուծոյ » . յառաջքան զգալն Քրիստոսի 'ի Քրկութիւն մեր , ամենքն իրրե միզով պատած պաշարուած՝ այլ աւելի դէպ 'ի մթութեան խորը կ'երթային . իսկ Փրկչին զպէն ետեւ ամենքն իրրե թէ զահավէժ տեղէ մը վեր ցատքեցին իրենց մոլորութենէն . « որպէս 'ի վախէ իմեքէ 'ի գրոյ » կրապաշտութենէ 'ի վեր յարուցեալք » :

Այսպիսի կրքեր արթընցան վերոյիշեալ հալածանաց ատեն 'ի Մելիտինէ , ուր կ'երեւի թէ մինչև այն ատեն ոչ սաստիկ հալածանք եղած էր , ոչ քրիստոնեայ իր հաւատոց համար նահատակեալ . վասն զի նոյն իսկ մեր Մելիտեան պայազատն առաջին վկայ Քրիստոսի կոչուի այս կողմերս , գոնէ այս հալածանաց ատեն . որ առաջիններէն աւելի ընդհանուր հրատարակեցաւ և սաստկացաւ . և այս մայրագաղաքիս մէջ այլ կայսերական հրովարտակն կախեցաւ 'ի հրապարակս , կամ յերկրպագութիւն կորց կամ 'ի մահ կոշելով զամեն նշանաւոր մարդ , և մանաւանդ զզինակիրս . որոց կամ 'ի պատիւս յառաջելու հրաւելք կայր , կամ զլուկմինին կորուսանելու սպառնալիք . և թէ կ'ուզես նէարքոսի նմանաբանութեամբն ըսել , կամ նորէն 'ի խորս միզին և մթան իննելընկնիլ , կամ 'ի վախէ և 'ի գրոյ անտի վեր ցատքել , ենել թռչիլ : ...

իսկ արդ ինչու զու ինքնին՝ որ այսպէս խորհրդածէիր , ինչու թևերուդ չոտուիր չիթուար սրտիդ նետած տեղը , յերկինս . ինչու չելար բոլորովին այս միզախսոն կեանքէս և չխառնեցար 'ի լոյսն անդիշեր . ինչու կու տնտնաս կուտարակուսիս . և մանաւանդ ինչու այդշափ կու տրտմիս , կ'այլայլիս , և երեսացդ հրեշտակային պարզութիւնն հիւանդի և ցաւագարի կերպ կ'առնու . ինչու այդ պայծառ աչքերորդ իրրե արեւու լուսէն այլ խորշելով՝ իրենց կա-

պիճներուն խորը կու քաշուին՝ մշուշ  
ու մրուր առած, և երկլնցած ծնօտիցդ  
վրայ գեռաբոյս մօրուացդ վնջիկին կու  
խոռուին. և քու խօսքերովդ խակ ըսեմ,  
ինչո՞ւ ով Նէարքոս «ի նեղասրտութիւն  
» եկեալ հանապաղ յոգւոյ հանելով  
» լսո գառնապէս » . . . տրտմութիւն  
քու քաղցր հոգւոյդ անծանօթ էր, արտ  
սունք՝ քու մաքուր զիմացդ վրայ ճամ  
բայ չէին բացած. սիրտդ՝ նեղութիւն  
և ցաւ գրեթէ չէր կրնար կրել, որով  
հետեւ կրկնակ երկպատիկ էր, համակիր  
համաշոնչ բարեկամի մը սրտով ամ  
րացեալ, քու Պօլիքտոսիդ սրտովը. չկար  
վէրք մը՝ որ այն սրտով չիրժշկուէր, ոչ  
պնդութիւն կամ պաղութիւն մը՝ որ ա  
նոր կրակով չիհալէր. արդ ինչո՞ւ չես  
փութար երթար դիմեր անոր՝ որ քու  
միւս եսդ է. այլ մանաւանդ կ'ըսես թէ  
սիրտդ « և ոչ սովորական խօսիցն կա  
» մէր հաղորդել Պօլիքտոսի » : — Ովկ  
սիրտ փափուկ, սիրտ զգայուն. կըր  
նայիր արդեք քան զայս սաստիկ հա  
րուած մը տալ թէ դու քեզի՝ թէ քու  
մէկիկ բարեկամիդ : . . .

Դ. Չտարակուսինք, Հայկակ, որ այս  
այլ Նէարքոսի սաստիկ սիրոյն ակամայ  
հնալքն է. արդարի « Բնուոն է իրեւ ըզ  
մահ՝ սէր » : Աէր մը այնպիսի մաքուր  
սրտի մէջ սնած՝ որ կարծես թէ Յով  
հաննու Սիրելոյ պէս Քրիստոսի կուրծ  
քէն քաշեր էր իր հրեղէն աղբիւրը : . . .  
Բայց Պօլիքտոս՝ որ զեռ չէր ընկած այն  
աստուածային լանջաց վրայ, զեռ չէր  
մարմնով ընդ մարմինն Աստուծոյ միա  
ցած և ոչ հոգւով հաղորդուած ընդ Յի  
սուսի հոգւոյն, աւելի քան զնէարքոս  
կ'ափշէր շուարէր անոր անսովոր ան  
կարծելի տիսրութեանը՝ և մանաւանդ  
լուութեանը վրայ. սիրտն տակն ու վրայ  
եղած՝ կարծէր թէ այնքան տարուան  
բարեկամութեան քաղցրութեանց փո  
խանակ՝ յանկարծ ամենածանր դառ  
նութիւն մը պիտի գայ. կու խոռվէր,  
կու լայր ինքն այլ, և բիւր անդամ կու  
հարցընէր պատճառը: Նէարքոս՝ պա  
տասխան անգամ չէր տայր կամ չէր  
կրնար տալ: Պօլիքտոս երբեմն ստիպե-

լով՝ երբեմն ինքն այլ լոելով, մէկ մի  
իրեւ յուսահատ մէկ մ'իրեւ սրտաբեկ  
կ'երդուընցընէր նորէն հարցընէր. Զեմ  
կրնար հասկընալ նէարքոս, այս ինչ  
գործ ինչ մտածութիւն է. ոչ բարկու  
թեան նմանի ոչ տհաճութեան . . . ար  
դեզ իրաւ կրնայ ըլլալ, կրնամ հաւա  
տալ որ Նէարքոսի սիրտն պաղի ՚ի Պօ  
լիքտեայ. կրնամ կարծել Պօլիքտոս որ  
Նէարքոս իրեն հետ չխօսի, իրմէ դաղտ  
նիք պահէ. յետ այնչափ ժամանակաց  
անարժան գտուեցայ քու սրտիդ. բայց  
ըսէ գոնէ ինչ բանով, ինչ կերպով.  
« զի՞նչ տրտմութիւն ընկալար յինէն  
» երբէք, կամ որ վհատութիւն եղեւ  
քեզ յինէն » : Նէարքոսի սիրտն որ սի  
րելոյն ամեն մէկ խօսքէն նոր նոր կու  
խոցուէր կու կտրէր, ոչ կրնար դիմա  
նալ և ոչ կիրքը բացատրել. շատ ան  
գամ շրթունքը շարժեց և ձայնն հեկե  
կանաց մէջ հեղձամղծուկ թաղեցաւ:  
Երկուքն այլ իրեւ առանց վէրքի վիրա  
ւորք, առանց կուտի զարնուածք՝ կու  
տանջուէին. մէկ մը զլուխ զլիխ տուած,  
մէկ մը երեսնին իրարմէ դարձուցած՝ ի  
լալ և հառաչել. մինչև հազիւ սիրտն և  
շունչը պնդելով սկսաւ ըսել Նէարքոս.  
Տրտմութեանս պատճառը կու հարցը  
նես. կրնայ ուրիշ կամ աւելի պատճառ  
մ'ըլլալ սրտի՝ քան զբաժանումն: . . .  
Ի՞նչ կայծակ էր որ թռաւ Նէարքո  
սի բերնէն: — Բաժանումն, կանչեց Պօ  
լիքտոս: — Բաժանումն, կրկնեց Նէար  
քոս . . . կայսերական հրամանքն ասկէ  
ետեւ մէկմէկէ զատեն պիտի զմեզ. այ  
սուհետեւ Նէարքոս և Պօլիքտոս մէկ չեն...  
թող, լոենք հեռանանք, որ մեր սէրն  
աւելի չտանջէ զմեզ: . . .

Վեր ցատքեց Պօլիքտոս՝ կրակէ աչք  
և շրթունք շարժելով. Այդ ինչ անսա  
կրնկալ խօսք է որ կու լսեմ քեզմէ  
Նէարքոս. մինչև հիմայ գիտէի և գի  
տեմ որ մէկ բան մը, միայն բան մը կըր  
նար զմեզ զատել իրարմէ, մահն. բայց  
ոչ կայսերք կրնան մեր բարեկամու  
թիւնը բաժնել, և ոչ աշխարհք մեր սէ  
րը մարել. Պօլիքտոսի անկարելի է բաժ  
նուիլ ՚ի Նէարքոսէ, բայց եթէ մա-

հուամբ : — Այն ատեն խորունկ հառա-  
չանկով մ'ըսաւ Նէալքոս . ԱՇ , բնա-  
կան մահուանէ աւելի զօրաւոր բան մը  
կայ որ զմեղ կրնայ բաժնել իրարմէ : ...  
Դարձեալ ցնցեցաւ Պօլիքտոս, դարձեալ  
թերը թօթվեց՝ պլուեցաւ Նէալքոսի  
վզին , գդուէր գորովէր կ'աղաչէր կ'եր-  
դուշնցընէր որ ըսէ պարզաբար ի՞նչ էր  
միտքն . ի՞նչ կրնար ըլլալ մահուանէ  
զատ և անկէ զօրաւոր՝ որ զիրենք իրար-  
մէ բաժնէ : Նէալքոս՝ տղու պէս և թե-  
րես աւելի այլ ըալով հեկեկալով՝ ձայ-  
նը ու սիրտը կու կտրատէր , բերնով չի-  
կարնալով՝ կ'ուգէր աչքերովը խօսիլ  
սիրելոյն հետ . և անոր խոռվութենէն  
կրկին ու կրկին խոռվելով՝ դողալով , և  
ոչ ոսքի վրայ կրնալով կենալ՝ ընկաւ  
'ի գետին : Պօլիքտոս այլ աւելի շուա-  
րած ու այլայլած՝ ընելիքը չէր դիտեր .  
սկսաւ անսովոր կասկածանաց երթալ .  
բայց մէկէն խիղճն կ'ըսէր « Ոչ ի՞նչ ու-  
» նիմ կարծիս չարի 'ի լաւ բարս Նէար-  
քոսի » . սակայն չըլլայ թէ թշնամի մը  
խօսք խառնած կամ պղտորած ըլլայ  
միտքը . այս այլ անկարելի է իր բարի  
սրտին . — չըլլայ թէ մէկն չարախօսու-  
թիւն ըրած ըլլայ Նէալքոսի վրայ , կամ  
իրեւ բերնէն անպատշաճ խօսք մը լը-  
սած , կամ իրեւ անհաւատարիմ իր  
խոստման . կամ թէ պարտքի տակ ըն-  
կած ըլլայ : Այս և այսպիսի խօսքեր կ'ը-  
սէր կու հարցընէր Նէալքոսի , կու խոռ-  
տանայր իր ամեն ստացուածքը , ընտա-  
նիքն և կեանքն անգամ մէկէն տալու 'ի  
սէր նորա , որուն արդէն նուիրած էր :  
Այս խօսքերէս գրեթէ ամաշելով՝ վեր  
ելաւ Նէալքոս , և դարձեալ կէս համար-  
ձակ կէս վախիմելով ու անհնարին  
տրտութեամբ ըսաւ . Մեր բաժանման  
օրն հասած է . վաղը ... ժամանակն կու  
ստիպէ , պիտի բաժնուինք , վասն զի  
վարքով ու ձեռվ նման չեմք իրարու ...  
թէ և սիրելիք : — Պօլիքտոս յիրաւի խոռ-  
վելով և խոցուելով այս խօսքէն , իմա-  
ցաւ որ Նէալքոսի վրայ յիմարութիւն  
չէ եկածն , այլ սրտին վրայ ծանր բան  
մը կայ , որ այնչափ կու տանջէ զնա .  
ի՞նքն այլ ձայնը վերուց ու սիրով սըրտ-

մրտած կու կանչէր կու ստիպէր որ ըսէ  
շուտով ու յայտնի՝ ի՞նչ էր իրենց մէջ  
մտած տարրերութիւնն՝ որ վաղը զի-  
րենք պիտի բաժնէր . ապա թէ ոչ , կ'ը-  
սէր հիմայ հոս ոսքիդ տակը կ'ընկնիմ  
կու մեռնիմ : — Վերջապէս Նէալքոս քիչ  
մ'այլ կմկըմալէն ետև ըսաւ . կայսերա-  
կան խիստ հրաման ելած է քրիստո-  
նէից վրայ , կամ զոհելու է կամ մեռ-  
նելու . ես քրիստոնեայ եմ , զու գիտես ,  
գիտեն ուրիշներն այլ . բոլոր աշխարհ-  
քիս համար չեմ թողուր զբեղ Պօլիք-  
տոս , բայց Պօլիքտոսիս համար չեմ կըր-  
նար թողուր զբրիստոս : . . . — Ո՛վ օրհ-  
նեալ սիրելի անձն , կանչեց Պօլիքտոս ,  
նոր կրակով մը վառուելով և փայլե-  
լով , ի՞նչո՞ւ հեռանաս 'ի Պօլիքտոսէ՝ Քրիս-  
տոսդ չթողլու համար . միթէ միայն  
քուկդ է Քրիստոս . . . ես այլ այսօր՝ զու  
ինծի չեկած՝ տեսայ այն Յիսուս Քրիս-  
տոսդ , որ եկաւ վրայէս հանեց այս աղ-  
տեղի զինուորական քղամիդս , և զեղե-  
ցիկ լուսանման զդեստ մը հագուց , ու  
թեւաւոր ձի մ'այլ տուաւ ինծի , գերա-  
գոյն զինուորութեան դաս անցընելով  
զիս : — Զայս որ լսեց Նէալքոս՝ զմայլե-  
ցաւ . արտսունքն աչքերուն մէջ 'ի կայ-  
ծակ փոխուեցան , տատրակ սիրտն ար-  
ծուացաւ . բոլոր հասակին ուժն՝ և բնու-  
թենէն աւելի զօրութիւն մ'այլ առած ,  
Ուրեմն , կանչեց , զու այլ ճանչցա՞ր զբրիս-  
տոս՝ Աստուած . իրաւ է որ Պօլիքտոս  
կու հաւատայ Քրիստոսի : — Եւ Երբ չէի  
ճանչցած ես զնա . կամ Երբ անհաւա-  
տութիւն ցուցած էի , ով Նէալքոս . Եր-  
բոր դու քրիստոնէից վարքը կու պատ-  
մէիր՝ միթէ ես չէի համիր . Երբոր Քրիս-  
տոսիդ աւետարանը կարդայիր՝ ես չէի  
զմայլեր . Երբ իր մահը կու նկարա-  
զրէիր , ես չէի լար դողալով . . . իրաւ  
անուամբ և ընկերութեամբ չէի քրիս-  
տոնեայ , բայց ինծի արարիչ և տէր՝ ըզ-  
Քրիստոս միայն ճանաչէի , Քրիստոսի  
միայն կ'ուզէի ծառայել , և անոր հակա-  
ռակ կանգնած սուտ և խայտառակ  
կուռքերը՝ անարգել և մերժել : Նէար-  
քոս ուրախութենէն կու դողայր կու  
սարսէր . բայց սիրոյն սաստկութեամբն

ինչուան 'ի թերահաւատութիւն կ'եր-  
թայր . Ա.յդ ըսածներուդ ժամանակն է ,  
կ'ըսէր , ով Պօլիքտէ . հեթանոսաց հրա-  
մանկըն հրատարակեցան և որոշիչ վը-  
ճիռն կտրուած է , կամ զոհել կոոց  
կամ մեռնիլ . . . Ո՞հ , Պօլիքտոս , կու վա-  
խեմ , կու վախեմ թէ դքեզ կորսընցը-  
նեմ . դու դեռ կատարեալ քրիստոնեայ  
չես . եթէ վաղը ստիպուիս զոհելու կը-  
ոոց՝ արդեօք պիտի կարենամ դէմ կե-  
նալ , թէ . . . հնագանդիլ կայսերաց . . . և  
անով բաժնուիլ 'ի նէարքոսէ և 'ի Քրիս-  
տոսէ : . . .

Այս խօսքը լսելուն՝ Պօլիքտոս երե-  
ցաւ իր բոլոր եռանդուն բնութեան և  
բարուց մէջ . աչքը՝ մէկ մը յերկինք նե-  
տեց , մէկ մը փայլակելով նէարքոսի  
վրայ , և անոր ձեռքը բարկութեամբ մը  
թօժուելով , չիմայ կ'իմանամ , ըսաւ ,  
միտքդ . այս էր քու տրտմութեանդ և  
վախիդ պատճառն . այս կարծիքն ու-  
նէիր Պօլիքտոսի վրայ . այսպէս ճանչ-  
նայիր բարեկամի . յետ տեսնելուդ թէ  
ինչ ախորժով կու լսեմ և կ'ընդունիմ  
քու ըսածներդ քրիստոնէութեան վը-  
րայօք՝ կու վայլէր որ Պօլիքտոս 'ի նէար-  
քոսէ ասանկ խօսք լսեր : Եթէ այնպէս  
սրտով միշտ զիրար սիրեցինք , միթէ  
հոգուով կրնամիք բաժնուիլ , և մարմնա-  
ւոր բարկը ու սէր հոգեսորէն վեր դնել :  
Եթէ հասեր է ժամանակն , ինչո՞ւ կ'ու-  
շանամիք . ինչո՞ւ պարսկերնիս չկատա-  
րեմք . ինչո՞ւ չյանդիմաննեմք չխայտա-  
ռակեմք զկուսու , և չբարձրացընեմք ըզ-  
քրիստոս Աստուած : . . . Ո՞վ առաքինի  
և վկայավայել խօսուածք . ինչ անբա-  
ցատրելի ուրախութեամբ լցիք նէար-  
քոսի սիրար . որ « որպէս թէ 'ի քնոյ  
» ինչ զարթուցեալ յերանելցյն 'ի Պօ-  
» ղիքտոսի բանիցն , և զիւր հոգին և  
» զմիտան վերստին կանգնէր , և ասէր  
» առ Սուրբն . թէ ինձ՝ ով Պօղիքտէ ,  
» ոչ մեծութիւն և ոչ զինուորութեան  
» պատիւ , ոչ կեանք աշխարհիս այսո-  
» րիկ պատուականագոյն թուին՝ քան  
» զկեանսն Քրիստոսի . այլ զանմահու-  
» թիւն և զփրկութիւն և զյաւիտենա-  
» կանն՝ փոխանակ մարդկային և առ-

» ժամանակեան կենացս՝ յառաջ պա-  
» տուել հաճոյ է ինձ » :

Կը շարունակուի :

Հ. Դ. Մ. Աւետ.

Ապրիլ

Յապրիլ յամառն արժան է յայլ  
խիստ ցրտային լեառն առնել զյառաջ  
ասացեալ տնկելս . զի այլ յուշ է 'ի  
ծաղկելն և 'ի տերևին պլազկելն : Հայ-  
եաց և անտի ուսիր յառաջ քան զծաղ-  
կելն առնել զպատրուսելն . և թէ ա-  
կնբցես՝ արձակ փորէ և չաք մի 'ի հո-  
ղոյն տնկին տակն 'ի վեր կուտէ , որ ա-  
րևն պահէ զտակքն . և մատղաշ այգին  
երկու հետ չէ պարտ փորել , և ոչ ա-  
կընբացել . և՝ յապրիլին փորէ զոր փո-  
րես : Եւ զնոր տունկն որ մէկ տարոյ լի-  
նի չկտրես , և ոչ բնաւ սուր հացնես .  
լաւն այն է . և զընկուզի և զձիթենին ,  
և զհապալսին <sup>1</sup> 'ի նոյն ժամն յօտէ՝  
որ յորդորի պտուղն . և զմնջեղ ծառի  
սերմն որ իւր տառ ասեն , որ է <sup>2</sup> . . . .  
'ի նոյն ժամն է պարտ քաղել և ցանել ,  
նոյնպէս և թէ թզենի լինի :

Ի ՎԱՐՏԱԿՈՅ ԳՐՈՑ

<sup>1</sup> Մըտենի ծառի տեսակ :

<sup>2</sup> Պարապ թողած և 'ի բնագրին :